

կարծուի թէ այս բառը կեղտական է): Փիլիպպոս առաքեալ իր տունը տարաւ զայն ի Կեսարիա: Բազմաթիւ քրիստոնեայ համայնքներ հաւաքուած ըլլալով այս քաղաքին մէջ, Հերովդէսէն շինուած մեհեանը եկեղեցիի վերածուեցաւ և հոն զետեղուեցաւ նոյն սկիհը: Օմարի կողմէ Կեսարիան գրաւուելէ յետոյ հոն մնաց անիկա, և որչափ ատեն որ իսլամական տիրապետութեան տակ նոյն եկեղեցին մզկիթի փոխուած էր, դարձեալ հոն կը մնար նոյն անօթը: Ճենովացիները և Բիզանցիները օգնութեան փութալով Երուսաղէմի նորահաստատ թագաւորութեան, քրիստոնեաները պաշարեցին Կեսարիան և տասնևհինգ օրէն գրաւեցին զայն: Անոնք ստացան ճոխ աւար մը, բայց ճենովացիները իբր բաժին՝ կ'ուզէին այն սկիհը որ գտնուած էր մեծ մզկիթին մէջ: Անոնք տարին զայն ճենովա եւ զետեղեցին Լաւրենտիոսի մայր եկեղեցին sacro catino անունով: Ֆրանսայի իտալական արշաւանքէն յետոյ անկէ վերցուցին և փոխադրուեցաւ Բարիզ: Ճենովացիներուն տրուած ժամանակ՝ կ'ըսուի թէ ճանապարհին ան կոտրած էր: Ս. Լաւրենտիոսի աւանդատան մէջ պահուած է ան: Տեսնուած է ան ճենովայի քաղաքապետական հիւրանոցին մէջ, ու հոգաբարձուն ցոյց կուտայ զայն գրքի մը և Քրիստափոր Գոլոմպոսի մէկ նամակին հետ: Վեցանկիւնի ձևով եղնգաքար մըն է. բաժակին տրամագիծը 13 մատնաչափ եւ բարձրութիւնը 6.5 է: Տիւրացի Կիյեօմ որ նկարագրած է զայն, միւսնոյն չափը կուտայ: Բաժակին կէսերէն մէկը բեկանուած է հինգ կամ վեց կտորներու, որոնք իրար փակցուած են, բայց մէկը կը պակսի: Սկիհը ճոխաբար յեռուած է, անոր պատեանը զարդարուած է ոսկիէ զանակներով: